

ՀՆՁԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՋԷՅԹՈՒՆԻ ՀՆՁԱԿԵԱՆ ՎԵՅ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ.

(Յօդուած երկրորդ եւ վերջին.)

Այժմ ընդհանուրից անցնենք մասնաւորին:

Այս վերջին եօթ-ութ տարւայ ընթացքում տեղի ունեցած հայ յեղափոխական բոլոր շարժումները մէկը միւսի հետ սերտ կերպով կապված են: Սկսելով դժգոհութեան ու բողոքի արտայայտութեամբ նախ մասնակի կերպով, մասնակի դէպքերով, այստեղ և այնտեղ, այդ արտայայտութիւնը ժամանակի ընթացքում, երբ յեղափոխական զաղափարն ու ոգին աւելի և աւելի տարածվեցան ժողովրդի մէջ, ընդունեց աւելի և աւելի ընդարձակ ու մեծ ձեռնարկների ծաւալ: Յեղափոխութեան ամեն դէպքերը, ամեն փաստերը, լինելով միանման, կամ աւելի ճիշդ՝ միատեսակ ու միանպատակ, իրանց մէջ ունեն մի ներքին տրամաբանական կապ, որը նրանց՝ միասին առնելով՝ ներկայացնում է իրիւ մէկ ամբողջութիւն: Այդ ամբողջութիւնը տակաւին չէ ընդունել իր վերջնական զանգուածի կերպարանքը, և դա՛ հէնց այն պարզ պատճառով, որ յեղափոխական դէպքերը դեռ չեն յանգել իրանց վերջաւորութեան: Բայց և այնպէս մինչև հիմա եղած փաստերն արեւ են իրանց նշանաւոր գործը հայոց կեանքի վերանորոգման նկատմամբ և նրանց յաջորդող յեղափոխական նորանոր դէպքերը կը լրացնեն ամբողջը:

Սակայն հայկական յեղափոխութիւնն աւարտած չը լինելով իր պատմական դերը, քննել ու դնահատել նրա ամբողջ նշանակութիւնը դեռ դժուար ու համարձակ քայլ է, քանի որ նա մեզ ամենքիս համար մի ժամանակակից գործ է: Մենք ապրում ենք նրա մէջ, անմիջական կերպով ըզգալով ու կրելով նրա աջող ու անաջող երևույթները, տպաւորվելով ու ազդվելով նրա ամենմի նշանաւոր գործողութիւնից, ստանալով նրա հարուածները, որպէս և ոգևորվելով նրա յոյսերով, հանգիստստես լինելով նրա բուռն ու խառն ընթացքին, կամ մասնակից ու գերակատար նրա գործողութիւններում, կամ ընդգրկված գրանցով: Այդ պատճառով այսօր նրան պատկերացնելու ու քննելու համար տակաւին դժուար է առ-

հասարակ ունենալ պաղարիւն, անաչառ, որպէս նաև բազմաթիւ դէպքերն ամբողջութեամբ ընդգրկող միտք ու զգացում: Այս դա՛ ևս առաւել այն պատճառով, որ մեր կեանքի այդ պատմական մեծ երևույթը, յեղափոխութիւնը, դեռ չէ կատարել՝ աւարտել իր ամբողջ դերն ու գործը, դեռ գործողութեան մէջ է, դեռ կարող է ընդունել նորանոր կերպարանքներ, առաջ բերել նորանոր դէպքեր և պատճառ լինել նորանոր հետեանքների ու արդիւնքների:

Այս սակայն, հակառակ դրան, այսօր ամենմէկը — ծիծաղաշարժ երևույթ — շտապում է վաղաժամ կերպով դատաւոր կանգնել հայկական յեղափոխութեան: Մէկն ասում է, թէ յեղափոխութիւնը չը պիտի սկսվէր, միւսը բացականչում է, թէ միայն կոտորածներ առաջ եկան, երրորդն աղաղակում է, թէ հերիք է, դադարեցրէք յեղափոխական շարժումները... մի շարք դատաւարութիւններ նոյնքան տարօրինակ, որքան և անտեղի ու իմաստակ: Աժանագին ամբաստանիչները և տկարամիտ ֆիլիստրներն իրանց ասպարէզը դրտել են: Բայց ո՞րքան աներես ու անձուռնի տրվածարութիւն է, երբ դրանցից իւրաքանչիւրն իր կողմից մոտածում է, որ իր սեփական ճաշակի ու պատշաճութեան համապատասխան պէտք է լինէր աղգային կեանքը. ո՞րքան նա միամիտ է, երբ որոտում է, որ ամեն բան շատ աւելի լաւ կը լինէր, եթէ այնպէս լինէր, ինչպէս ինքն է մոտածում, երբ նա կարծում է, որ իր այդ խօսքովն ինքն է այն գերբնական հանձարը, որն անկարելին կարելի դարձնելով, պէտք է իր սեփական կամքի ու դատողութեան համաձայն ընթացք տար դէպքերին, յաղթահարէր հանգամանքների կոյր զօրութեանը: Այս դրանով այդպիսի խեղացիները չեն ապացուցանում արդեօք իրանց մեծամիտ ազխութիւնը, քանի որ դէպքերն ու հանգամանքները միշտ ունեն իրանց ներքին տրամաբանութիւնը, դէպքեր, հանգամանքներ, որոնք իրանք իրանք երևան գալուն պատճառ են եղել յաջորդաբար և որոնք իրանց բնական ընթացքի զօրութեամբ ամեն մարդկային կամքից շատ աւելի զօրաւոր են:

Յեղովոփոխութիւնը չը պիտի սկսվէր, պոռուժէն մեզ: Բայց սակայն այդ խօսքի փոխարէն աւելի տրամաբանական չէր լինիլ, եթէ ասէին, թէ պէտք չէր որ հայերս սուլթանական բռնութեան տակ սարուկ ընկնէինք, թէ պէտք չէր որ մեր կեանքի ծանր ու մահացնող պայմանները և առաջդիմութեան ձգտումը մեր մէջ ծագեցնէին մէկ աւելի բարեկեց վիճակի պահանջ, թէ, վերջապէս, պէտք չէր որ մեզ ճնշէին, հարստահարէին, հալածէին, և ենիշերինէր, Խաղովաճհներ, Զալալէիները ու մարդկութեան նոյնանման պատուհասներ մեր գլխին զարնվէին և ջարդէին մեզ սուլթանների հրամաններով: Այդ բոլորը, սակայն, մեր արիւնշատ կեանքում տեղի են ունեցել. թէ ըստրկութիւնը, թէ կեանքի նոր պահանջները, թէ բռնութիւնները, աւերներն ու կոտորածները, բոլորը տեղի են ունեցել — և ժամանակի ընթացքում ծնունդ տվել հայկական յեղափոխութեանը:

Այդ ամբաստանութեանն անմիջապէս յաջորդում է մէկ ուրիշը, ամենապիտաւորը, որ այսօր դարձել է մեր հակառակորդների ու թշնամիների ծածանվող դրօշակը մեր դէմ... Կոտորածներ, այդ սարսափելի խօսքը, որ իրողութիւն է, թեթեւամիտ կերպով ուղղվում է շնչակեաններիս դէմ, և միամիտներին, ի վերջոյ, մնում է միայն ենթադրել, թէ կոտորածների հեղինակներն ու գործադրողները նոյն խել մենք ենք և ոչ սուլթանը և ոչ նրա զօրքն ու խուժանը: Այդ արիւնշալի ամբաստանութեան պատասխանը կը տայ ապագան, կը տայ պատմութիւնը, կը տան գալիք սերունդները, և եթէ ուսաց կայսերական և մծնդօրներից վեժված սուլթանների արիւնաթաթախ ծիրանիի ամբողջ պատասխանատուութիւնը պէտք է ընկնէ շնչակեան Կուսակցութեան վրայ, հազարաւոր շնչակեան նահատակների ու հերոսների հպարտ ճակատի վրայ — շնչակեան մեծ, պատմական գործերը, կատարված հայութեան ազատագրութեան համար, կարող կը լինեն կրել այդ ահաւոր ու դառն բեռը: Բայց մինչև պատմութեան դատավճռի որոշվելը թող ոչ ոք չը յանդգնէ ազդի թափված սուրբ արեան մէջ իր կեղտոտ ձեռքը թաթախել՝ իր անմարութեանը և կամ շնչակեանների դէմ իր ունեցած անխոտովանելի կրքերին յաղուրդ տալու համար: Իսկ եթէ նոյն ամբաստանութիւնը դեռ կը շարունակէ իր անմիտ պտոյտն անել, այն ժամանակ մենք կասենք. — Վա՛եք պատմութեան մէջ հասարակական-քաղաքական կամ կրօնական պատերազմների էջեր, որոնց մէջ անմեղ արեան հեղեղը հոսանքը չը գրաւէ ամենամեծ տեղը: Վա՛եք կենսական վերանորոգման համար կատարված մարդկային մեծամեծ գործեր, որոնց մէջ հասարակութեան երկու հակառակ ոյժերի — նորի և հնի — իրար հետ

բաղխման միջոցին, հասարակութեան մի մասի անձնագործութեան ու եւանդի և միւս մասի անգործակրքերի ու կատաղութեան ընդհարման ժամանակ ժողովրդային անպաշտպան ընդհանրութեան առատ արիւնը չը հեղեղէր, ճահճի պէս չը լճանար գրկխառման բեռի ու կախողանի պատուանդանի և կամ բոցապատ խարոյկի շուրջը, որոնց վրայ նահատակվել են բարերար հերոսները, որոնց վրայ պատժվել են նաև բռնաւորները: Աւ այդ արիւնը միշտ, վերջին հաշուով, դրաւակնան է եղել առաջադիմութեան յաղթանակի: Վրիստոնեայի աչքին ինչ կայ աւելի քաղցր, աւելի փափուկ, աւելի բարի, քան Վրիստոսի խօսքը Սիրոյ ու Վթութեան, և սակայն այդ բարբառը որքան խարոյկներ վառեց, արեան ռապիտի հեղեղներով աշխարհը ողողեց երկար դարերի ընթացքում մինչև այսօր և նոյն իրան Վրիստոսին հանեց խաչի վրայ...

Աւ ինչ աւելի քսամնելի, քան այն, որ այժմ մէկ անգործ մաքի տէր, ժամավաճառ սրարապի մէկը, կամ իր սեփական կրքերով մի թունաւորվածը, որը հէնց հայի թափված արեան վրայ յոյս դնելով, երազէ մէջ փայփայում է և անհամբեր սպասում իր և իր նմանների գոյութեան ապահովութիւնն ու ապատութիւնը, — որ այդպիսի մէկը յանդգնում է դատաւարտութիւններ ու ամբաստանութիւններ արձակել իր պատակաւ անսխալականութեան բարձրութիւնից: Ինչ աւելի քսամնելի, աւելի անհեթեթ ու ծիծաղելի, երբ այդպիսի մէկը ճգնում է ցեխ շարտել այն մարդկանց վրայ, որոնք քարոզելով հայոց կեանքի վերանորոգման ու ազատութեան սուրբ խօսքը, ձգտում են իրանց սեփական արիւնով գնել այդ ըզձացած ապագան ընդհանուր հայութեան համար:

Աւ մեզ պոռուժէն, թէ հերիք են յեղափոխական շարժումները, դադարեցէք: Աւ ինչպէս հասկացնել այդպիսիներին, որ այդ շարժումները կարող են աւարտ ու դադար առնել միայն բռնական կերպով, բնական ընթացքով: Ինելով մեր կեանքի ամենուէական ու հասունացած պահանջների արտայայտութիւն, բղիւծ լինելով մեր կենսական ներկայ ծանր պայմաններից, ունենալով դեր յեղաշրջելու այդ յոռի պայմանները և հաստատելու նորերը՝ համապատասխան մեր կենսական պահանջների — այդ շարժումները իրանք իրանց դադար կառնեն միայն այն ժամանակ, երբ իրագործվեն մեր կեանքի այն ներքին պահանջները, որոնցից ծագեցան նրանք, յեղափոխական շարժումները: Մաքառել դրանց դէմ ապարդիւն կը լինի. չը կայ մարդկային կամք, որ կարողանայ յաղթահարել դրանց, մինչև որ նա չը յաղթահարէ այն ներքին պատճառները, որոնք ստեղծող են այդ շարժումների: Աւ միայն կեանքի նոր պահանջների իրագործումով է, որ կը վերացվեն վերո-

յիշած պատճառները: Մինչև որ այդ իրադուր-
ծումը տեղի չունենայ, անկարելի է յաղթահա-
րել շարժումները: Նրանք այլ ևս հայ ժողո-
վրդի սեփականութիւն են և ներկայ պատմական
բոլորում նրա կեանքի ձգտումների ու պահանջնե-
րի արտայայտութեան միակ ու բնական եղանակ
և միջոց: Այլ իրերի այն վիճակը և այն անհա-
տական ճիգերը, որոնք արգելք են հանդիսանում
յեղափոխական շարժումների բնական ու պատմա-
կան ընթացքին, կը ստանան զրա ուժգին հար-
ուածը, կը գլորվեն զրա հեղեղի անպուսպ հոսան-
քի տակ:

Դա է բնական օրէնքը յեղափոխութեան, որ
ճնունդ է առել ժողովրդի կեանքի արգանդից:

ԶԻՅԹԱԻՆԻ ԱՊՍԵՄԲՐԱԻԹԵԱՆ ՀՆՃԱԿԵԱՆ ՎԵՑ ՊԱՐԱԳԼՈՒԽՆԵՐԸ.

Այսօր Լճիկոնում են այդ վեց հերոսները —
Աղասի, Հրաչեայ, Ապահ, Մէհ, Նշան և Ար-
ապետ: Ամբողջ չորս ամիս հմտութեամբ, քա-
ջութեամբ և դարձանալի աջողութեամբ, մի շարք
փառաւոր յաղթութիւններ տանելով, որ ամբողջ
քաղաքակիրթ աշխարհի ուշադրութիւնը դրաւեցին
իրանց վրայ, — Հնչակեան այդ վեց անձնուէր ա-
ռաքեալները, հայկական բանակ կազմած իրանց ա-
ռաջնորդութեան ներքոյ ութ հազար արի ու հե-
րոս Օւթթունցիներից, զրեթէ ամեն օր շարու-
նակ ամենամօթալի պարտութեան էին ենթար-
կում սուլթանական զօրաւորներին, որոնց թիւն ի
վերջոյ հասել էր մինչև 110,000 ահազին բազ-
մութեան: Այդ անհաւատար, դիւցազներգութեան
արժանի երկարատե կատաղի պատերազմային մըր-
ցումը հայ յեղափոխութեան ամենանշանաւոր դէպ-
քն է, որն իր բոլոր անմահ հերոսների անուննե-
րով ոսկէ տառերով կարձանագրվէ հայութեան նո-
րադոյն պատմութեան ամենափառաւոր էջերում:
Այդ հսկայական մարտը Օւթթունցիները վերջա-
ջին կատարեալ յաղթանակով և չարաչար պար-
տութեամբ թշնամու, որը 13,000 սպանված թու-
ղաւ կռիւ դաշտում: Այդ հսկայական մարտը
Օւթթունցիները վերջացրին կատարեալ յաղթա-
նակով, ըստ որում սուլթանը, խոտտովանելով իր
պարտութիւնը, խնդրեց մեծ տէրութիւնների մի-
ջամտութիւնը հաշտութեան բանակցութիւնների
համար: Օւթթունցիների կողմից ընտրված բա-
նակցողներն էին երեք Հնչակեան առաքեալներ, Ա-
ղասի, Հնչակեան Առաքելութեան ներկայացուցիչ
Ալիկիայում, Ապահ և Հրաչեայ-Մարաշ: Այն
պայմանները, որոնք Օւթթունցիների կողմից բա-
նակցողներն ընդունել տվին սուլթանին, լիովին
պատաբեր են Օւթթունցիների և Հայութեան
համար, և շատովն ենք աւելացնել, որ նրանք,

այդ ընդունված պայմանները, մինչև հիմա ծա-
նօթ եղածներից բառական տարբերութիւն ունեն,
մանաւանդ մի քանի կէտերը, յօգուտ Օւթթուն-
ցիների: «Հնչակ»-ի յաջորդ թուից մենք կը սկսենք
զետեղել Օւթթունցի հայկական բանակների փա-
ռաւոր կռիւների պատմութեան շարունակութիւ-
նը, մանրամասն նկարագրութեամբ, և առաջ կը
բերենք հաշտութեան ընդունված և կնքված վերջ-
նական պայմանների բոլոր կէտերը:

Մարդ սրտի բերկրութեամբ է նայում այն
վեց քաջերի վրայ, որոնք ամբողջ ամիսների ըն-
թացքում իրանց սրտի բարախման հետ միասին
բարախեցրին մի ժողովրդի միլիօնաւոր սրտեր, ամ-
բողջ ամիսների ընթացքում նրանք ուրախու-
թեան արցունքներ քամեցին միլիօնաւոր աչքերից
և նոր յոյս ու նոր կեանք ներշնչեցին հային հէնց
կոտորածների այն սարսափելի օրերում, երբ կար-
ծես այլ ևս կորած էր հայի յոյսն ու կեանքը:
Օւթթունցի ապստամբութիւնը հինգ հարիւր տա-
րիկի ի վեր հայութեան մէջ չը տեսնված գործ էր,
որը պարծանք կը բերէ մեզից նոյն իսկ աւելի
մեծ ազգերին և արժանի է դարձաւ դեռ ան-
կատամարտերի անուան: Օւթթունցի ապստամբու-
թիւնն ամենահաստատ հիմքը դրեց հայ ժողո-
վրդի ազատութեան: Այդ եղաւ Հնչակեան ա-
ռաքեալների և Օւթթունցի անմահ քաջերի գոր-
ծը, մեծ, հերոսական, արդիւնաւոր, պատմական
գործը, որ դարուց դար կանցնէ Հայութեան սե-
րունդների մէջ իբրեւ մի սուրբ գործ և անմահ
յիշատակ:

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ԳԵԼՈՒՄՏԸ:

Անգլիական հիւպատոսի թարգմանի ընկերակցու-
թեամբ և անգլիական ու իտալական հիւպատոսների
գաւառների և յատուկ տրված թիւը մի խումբ զինուոր-
ների պաշտպանութեան ներքեւ Չէթունցի վեց Հնչակեան-
ները հասան Մերսին, ուր նստելով Քրանսիական շո-
գենաւ, մեր ընկերները Ալէքսանդրիայի ճանապարհով
ճամբայ ընկան դէպի Մարսէյլ: Շոգենաւի մէջ կը
վայելէին բոլոր եւրոպացի բարձրաստիճան մարդոց սէրն,
ու յարգանքը:

Հնչակեան Մասնաճիւղերի հեռագիրներն ամէն
կողմ աւետած լինելով, երբ շոգենաւն հասաւ Ալէք-
սանդրիայի առաջ, իսկոյն դիմաւորել եկան Հնչակեան
գործիչները Ազգ. Թաղական Խորհրդոյ ատենապետի
և պատուաւոր ազգայինների հետ, որոնք փափաքեցան
դուրս տանել մեր ընկերները, մղուած բուռն և ան-
կեղծ զգացումներէ, գնահատելու և արժանաւայել
յարգանքներ մատուցուեցաւ Հնչակեան հերոսներին,
որոնք հայ ազգին զինուորական ու ազգային պատիւը
բարձրացուցին և ազգային պատմութեան էջերը փա-
ռաւորեցին:

Բայց որովհետեւ մեր ընկերները կը ճանապարհոր-
դէին ոչ թէ իբր պարզ անցորդ, այլ Քրանսական
պետութիւնը իր վրայ առած էր ապահով ազատ

Հողի վրայ հասցնելու երաշխավորությունը, Պոլսոյ Ֆրանսիական զեապանը, իր Մերսինի հիւպատոսի միջոցաւ հեռագրել և արտօնել էր նաւապետին զիրենք խիստ ապահով կերպով, հասցնել հակառակ պարագային պատասխանատուութիւնը կը ծանրանար նաւապետի վրայ: Հետեւեալ ինչքան ալ դժուար էր դուրս առնել, այսուհանդերձ պատուաւոր ազգայիններ երաշխավորելով նաւապետին, վայելուչ շքեղութեամբ դուրս տարին Ալէքսանդրիա քաղաք:

Լուր առնելով՝ հետզհետէ գաղթականութիւնը խուռն ու հետաքրքիր բազմութեամբ կը դիմէին հիացմամբ տեսնելու Զէյթունի հերոսները: Ոչ նուազ էր օտարազգիների հիացումն ու հետաքրքրութիւնը:

Մի քանի ազգայինների այցելութիւն տալէ վերջ թաղ. Խորհրդի հրաւերի վրայ, առաջնորդուեցան ազգային եկեղեցի, ուր կրօնական և ուսուցչական մի պատգամաւորութիւն խիստ սիրալիր կերպով ընդունեց զիրենք: Նախապէս այցելեցին երկուս վարժարանները, եկեղեցին և ապա հրաւիրուեցան առաջնորդարան. այդ տեղ: սիրալիր ու հետաքրքրական խօսակցութիւններէ վերջ՝ տեղի ունեցան ճառախօսութիւններ: Մէկ ժամ նստելէ յետոյ՝ հոծ ազգայինների հիացման ներքեւ դուրս եկան մեր ընկերները: Առաջնորդարանի դրան առաջ երկուս հայ մանկտին քաղցրանուագ երգերով ու կեցցէներով վերջին յարգանք արտայայտեցին: Անշափ քաղցր ու սրտաշարժ էր այդ տեսարանը, և այդպիսի անկեղծ ցոյցեր կարող են կրկնապատկել ազգի անկեղծ գործիչների թիւը:

Դոյն գիշեր վերադառնալով շոգենաւ, առաւօտեան, նոյն պատուաւոր ազգայինների միջոցաւ դուրս եկան և այցելութիւն տուին հայ և օտարազգի աշակաւոր անձնավորութիւններին: Բոլոր վայելուչ հիւրընկալութեան ծախսերը ստանձնել էր թաղ. Խորհուրդը: Ժամ երկուսին այցելութիւն տուին փախստական շընչակեաներին և քաջաբերական խօսքերէ յետոյ վերադարձան շոգենաւ: Շոգենաւ եկեր էին հարիւրի մօտ ազգայիններ, նոյն իսկ Գահիրէէն, որոց մէջ կային կրօնավարներ և հայ տիկիներ. սիրալիր յարգանքներն ու սքանչացումները մեծ զարմացում պատճառեցին նոյն իսկ ճամբորդներին, և արտասուախառն գրկախառնութիւններ եղան վերջին յարգանքները: Շոգենաւը մեկնեցաւ:

Հասնելով Մարսէյլ Ֆրանսական մի կօմիտէր մաքսատան մէջ դիմաւորեց շատ յարգանքով և ստորագրել տալով մի procès verbal, ազատ թողուց Ֆրանսական հողի վրայ: Դուրս գալով մաքսատնէն, Մարսէյլի ազգային գաղթականների մի պատգամաւորութիւն, մանաւանդ Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնէն յատուկ Լօնտօնէն Մարսէյլ ուղարկուած Պատգամաւորը, դիմաւորեցին մեր ընկերներին և կառքերով առաջնորդեցին կանխապատրաստուած վայրը: Երկու օր սիրալիր ընդունելութիւններ տեղի ունեցան տեղական ազգայինների կողմէ:

Մարսէյլէն հասնելով Լօնտօնի Վիկթորիա կայարանը, Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնի անդամները այլ ընկերների, ազգայինների և օտարազգի թղթակիցների հետ այնտեղ կապասէին անհամբեր ու սրտատուրով: Այն ինչ դուրս եկան մեր հերոսները, տեղի ունեցան կարօտալից գրկախառնութիւններ ու համբոյսները, այն համբոյսները որոնք աւելի քաղցր, ամենէն անկեղծ, ծանօթ ու ոգևորիչ են: Վեց հատ գեղեց-

կագոյն ծագեալ փուռներ նաեւ պսակներ պատրաստուած ընկերով մատուցուեցան մեր վեց ընկերներին և ապա մեկնեցան միասին դէպի Կուսակցութեան Կենտրոնը, ուր պատրաստուած էին նորանոր ընդունելութիւններ:

Հերոսների յաղթական կռիւներէն ետքը՝ անոնց ճամբորդութիւնն ալ Մերսինէն մինչև Լօնտօն ցնծական թափօր մըն էր:

Զէյթունի ապստամբութիւնը վարող Հնչակեան պարագլուխներու արտաքսման առթիւ, Մարսէյլի «Սէմաֆօր» լրագրի մարտ 18-ի թուին մէջ կը կարդանք հետեւեալը, զոր գրած է նոյն թերթի Մերսինի թղթակիցը. —

«ԶԵՅԹՈՒՆԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ»

«Ասոյս 12-ին մեկնելիք Մէսաթըրի-ի շոգենաւով քաղաքէս Մարսէյլ պիտի ուղևորին չորս ¹⁾ հայ պարագլուխները որոնք ամիսներով իրենց ձեռքին մէջ ունէին Զէյթունի ճակատագիրը և պարտութեան կենթարկէին 25,000 զօրքէ բաղկացած բանակ մը: Այս անձինքն են, Կարապետ, որ մեծ պարագլուխ է, և իւր օգնականները՝ Մլէհ, պ. Յակոբ և Համբարձում: Հաւանորէն ասոք պատերազմական անուններն են այս չորս մեծ դէմքերուն որոնց հայրենասիրական արիութիւնը անտարակոյս լաւագոյն յաջողութեան ալ արժանի է:»

«Ասոնց երիցագոյնը հազիւ երեսուն տարեկան կայ: Համակրելի է ասոնց դէմքը որուն զճագրութիւնը կարտայայտէ կորով ու եռանդ, կամք և մտացիութիւն: Գլուխին զրած են գալիաք, որ աւելի կը փայլեցնէ իրենց դէմքին սէգութիւնը և անկախութիւնը:»

«Իրենց 15 օրուան բնակութիւնը Մերսինի մէջ գրեթէ նշանաւոր դէպքի մը համեմատութիւններ ըստացաւ: Ամեն մարդ կուզէր մօտէն դիտել հայ ազգին այս գիկատորները. բայց իրենց հետաքրքրութիւնը չը կրցաւ գոհացում գտնել:»

«Այս չորս պարագլուխներն հոս հասնելէն ի վեր ամենախիստ կերպով գաղտնի կը պահուին, իրենց բնական սենեկին պատուհաններն ամրափակ կերպով գոց կը մնան և անոնց հետ ամէն հաղորդակցութիւն արգիւտուած է:»

«Վայրկեան մը միայն կարելի եղաւ զանոնք նըշմարել, երբ Ատանայէն եկած ժամանակ շոգենաւը կիջնային. ուր ահագին ամբոխ մը վազած էր. անմիջապէս զանոնք գոց կառքերու մէջ դնելով տարին իրենց համար պատրաստուած բնակարանը:»

«Իրենց ընկերացած են ոստիկանութեան հարկւրապետ մը, Հալէպի Անգլիական հիւպատոսարանին թարգմանը և անգլիացի ու իտալացի երկու գաւառ. տեղական իշխանութիւնը ասոնց հետ կը վարուին ամենայն ակնածութեամբ՝ մինչև այն օրը երբ զիրենք տանելիք շոգենաւին մէջ իրենց ոտքը դնելով Ֆրանսական հողի վրայ, ինքզինքնին ազատ պիտի գտնեն՝ մեր հանրապետական օրէնքներուն պաշտպանութեան տակ:»

Այդ տեղեկութիւնները տալէ յետոյ, թղթակիցը կը խօսի Զէյթունի ապստամբութեան մասին, անոր պաշարումին, հերոսական դիմադրութեանը, պետու-

¹⁾ Թղթակիցը թէեւ չորս է գրում, բայց զրոյնց թիւը վեց է:

թիւներու միջամտութեանը և հաշտութեան պարագաներուն վրայ համառօտիւ:

* * *

Նոյն լրագրի մարտ 26-ի թուէն կը քաղենք հետեւեալ հատուածը.

Լըյէկ առաւօտ, Մէսսփըրիի «Սէնտ» շոգենաւով Մէսսինէն հոս հասան չորս Հայ պարագլուխները, որոնք արիաբար վարեցին Զէյթունի պաշտպանութիւնը այդ քաղաքը գրաւելու պաշտօն ունեցող թուրքական բանակին դէմ և որոնք, հիւպատոսներուն գործակցութեամբ, ձեռք բերին պատուաւոր անձնատուութեան պայմաններ:

Այս պարագլուխներուն անուններն են Աղասի, Հրաչեայ-Մարալ, Ապահ և Մլէհ. իրենց ընկերացած են իրենց տեղակալներէն երկուքը, Նշան և Կարապետ:

Զէյթունի դէպքերը պատմուած են լրագրիս մէջ մեր թղթակիցներէն մէկին միջոցաւ և ընթերցողք փառն թէ այս նշանաւոր Հայերը օսմանեան հողէն արտաքսուած են: Շոգենաւուն մէջ երրորդ կարգը գրուած ըլլալով իրենց ծախքով անցած են առաջին կարգը և առարկայ եղած են Օրիփիէ նաւապետը մասնաւոր բարեսիրութեան, որը Ալէքսանդրիոյ առջև իրենց արտօնած է հաղորդակցիլ իրենց հայ հայրենակիցներուն հետ:

Մարտէսի մէջ ընդունուելով Լօնտօնի Հայ Բժիշկին մէկ պատուիրակէն, Պ. Սուրէն, և իրենց խումբ մը հայրենակիցներէն, հայ պարագլուխները «Օթէլ» տը լա փօսթ« իջեանեցան: Այսօր ճամբայ ելան Փարիզ և Լօնտօն երթալու: Հայկական իրաւանց այս քաջասիրտ պաշտպաններուն խօսքով, Գրան դիմում ըրած բարենորոգութիւններու գործադրութիւնը ուրիշ միջոցով չկրնար իրականապէս ձեռք բերուիլ, բայց միայն պետութեանց ազգու ճնշումով և կամ ճնշուած Հայերու զէնքի դիմելով: Բարենորոգումներու գործադրութիւնը կրնայ առաջ բերել անգործութեան շրջան մը, որ խիստ փափաքելի է, աւելի այն պատճառով որ թշուառութիւնը կը տիրէ Հայոց մէջ և Մահմետականները սաստիկ քրդուած են այս տարաբաղդ ժողովուրդին դէմ:

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԵՐԱՍՏԻՈՑ

ԿՈՏՈՐԱԶԷՆ ԱՌԱՋ.

25 հոկտ. 1895 — 1 յունուար 1896.

Ա. Պոլսոյ Յոյգէն վերջ լուր տարածուեցաւ թէ սուլթանն ընդունած է բարենորոգումներ ծրագրելը և հրաման եկած է անոր գործադրութեանը... Այդ օրերն իսկ կառավարութեան և թուրքերու մեջ արտասովոր շարժում մը սկսաւ ի յայտ գալ, ինչպէս բէտիֆ զինուորներու հաւաքումը և հետզհետէ բազմանալը, Պոլսէն զինուց և փամիւռչաներու փոխադրութիւնը — որոց առթիւ կուսակալ Խալիլ պէյը կըսէր թէ բարեկարգութեանց գործադրման առնել խլրտումներու առաջին անունը համար է — հարուստ թուրքերու սիրայօժար զինուոր գրուելը. միւս ուրիշ ժամանակներ գրամ տալով զինուորութեանէ կը փախէին. հայ զինագործներու խանութներէն գտնուած զէնքերու գրաւումը ոստիկանութեանէ և անոնց արհեստի կիրառութեան դէմ հանուած արգելքը որով 120-ի մօտ խանութներ որոց ամէն մէկուն մէջ 4-5 անձեր կաշխա-

տէին անգործ մնացին. հայ բաղամարդ թաղերու մէջ 3-4 յարկով պահանջներ շինուիլը և անոնց զինուորներով լեցուիլը իբր հայոց պաշտպանութեան համար, որ յետոյ յայտնուեցաւ թէ զմեզ պաշարելու համար շինուած էին. կառավարութեան զէնքի մթերանոցէն ձեռքի տակէ թուրքերու զէնք բաժնուիլը, ինչպէս նաև հայ զինագործներէ կողոպտուած զէնքերու կառավարական պալատին մէջ դարձեալ թուրքերու բաշխուիլը ևն:

Ասկէ վատ ամէն կարգի թուրքեր օր ըստ օրէ քաղաք կը լեցուէին, օրինակ, Ազիզիէի Զէրքէզներէն 1,000-ի մօտ ձիաւոր և 5-6 հազար հետեակ եկած էին: Հայեր կասկածելով այս բոլոր նախապատրաստութիւններէն, սկսան առաւօտները ուշ առնել իրենց գործին գլուխը գալ և իրիկունները կանուխ տուն վերադառնալ: Նաև հայերու կողմէ եղած դիմումների վրայ քաղաքիս հիւպատոսները Զէրքէզներու համախմբման մասին բացատրութիւն պահանջեցին վալիէն. վալին խաբեց զանոնք, պատրուակելով թէ այդ Զէրքէզներ ոստիկան պիտի գրուին և երթան հեռաւոր տեղերու խլրտումները զսպելու: Նոյն օրերը քաղաքէս 7-8 ժամ հեռու եղող փիւղերու մէջ սկսան տեղի ունենալ աւարառութիւնք, մարդասպանութիւնք և ուրիշ ոճիրներ. փիւղացի հայերը սկսան քաղաք դիմել և կառավարութեան բողոքել. վալին յսուտ է, կը չափազանցէք ևն. ըսելով հանգերձ զինուորներ կուղարկէր փիւղերը որոնք սակայն փոխանակ հայերը պաշտպանելու, աւարառութեանց և մարդասպանութեանց աւելի ընդհանուր ծաւալ ստանալուն կը նպաստէին քաջալերելով և անպատիժ թողելով հեղինակները:

Վեպքերու այս ընթացքին մէջ, մի օր կուսակալը տեղոյս Առաջնորդը կը ստիպէ որ մի հեռագիր տայ Կիւրին քաղաքի Հայ բնակչաց, որ իրենց զէնքերը կառավարութեան յանձնեն: Նա (վալին) կը պնդէ շարունակ թէ «երբ կիւրինցիք իրենց զէնքերը յանձնեն և անձնատուր լինին, կառավարութիւնը զանոնք քիւրդերու դէմ պիտի պաշտպանէ»: Երբ այստեղ վալին այս պահանջը կ'ընէր, անգին Կիւրինի ազգայինք հեռագրու Առաջնորդին դիմած էին թէ «յանուն մարդկութեան օգնեցէք, կրակ ու բոցի մէջ ենք»: Առաջնորդը կը մերժէ Վալին պահանջը, հաստատելով թէ Հայ ժողովուրդը անգին է բոլորովին. ուրեմն ինչպէս կարելի է իր չունեցածը պահանջել. «ընդհակառակը մենք կը սպասենք որ, կըսէ Առաջնորդը, շնորհիւ սուլթանին, քիւրդերն ու թիւրքերն ալ զինաթափ պիտի լինեն մերայնոց նման». Վալին նպատակն էր անշուշտ այս կերպով պատրուակ մը գրտնել ջարդերը իրականացնելու և միանգամայն անոնց պատասխանատուութիւնը հայոց վրայ ծանրացնելու, առարկելով թէ հայերը զէնք բարձրացուցին: Տեղոյս կաթողիկ Հայոց Առաջնորդ Հաճեան Սահակ եպիսկոպոսն ալ որ արդէն Եւգոնիոյ մօտ կողոպտուած սուրհանգակի խնդրոյն և ուրիշ պարագաներու մէջ ևս ազգապնաս ընթացք ունեցած է, շատ ջանաց համոզելու Պետրոս սրբազանը որ Կիւրին տրուելիք հեռագրին մասին տեղի տայ Վալիի պահանջքին, բայց ի զուր:

Վերջապէս հասեր էր հոկտեմբեր 30-ի երկուշաբթի օրը. Հայերը վերջնականապէս համոզուած էին թէ թիւրք կառավարութիւնը Մալաթիայի և ուրիշ տեղերու նման հոս ալ իր բարբարոսութիւնն ի գործ պիտի դնէ, ուստի կէս օրին փակեցին իրենց խանութ-

ները և փակուեցան իրենց տներու մէջ. Վալին տեսնելով որ այլ ևս Հայերը չեն խաբուիր իւր սուտ խոստումներէն, մի ուրիշ հնարքի կը դիմէ որը և իւրօր յաջողեցաւ: Հիւպատոսներուն երթալով հաշար և մէկ խաբւարայութիւնով կը յաջողի համոզել զանոնք թէ բնաւ վտանգ չը կայ և մի Հայի վնաս չըլլար: Ասոր վրայ Ամերիկայի և ֆրանսայի փոխ հիւպատոսները առաջնորդարան գալով կը վստահացնեն Առաջնորդը և կը յորդորեն որ ժողովուրդը իւր սովորական զբաղմունքէն ետ չը մնայ: Այս վստահացման վրայ, հակառակ Հնչակեաններու և ժողովրդի մի մասին կասկածին և արդարացի դիտողութեանց, Առաջնորդը յանձն կառնու ինքն ալ յարգորել ժողովուրդը, որ խանութները բանան: Թէ և արեւի պէս պայծառ էր թէ սուլթանի կառավարութիւնը ոչ խօսք յարգել գիտէ և ոչ ամենալ և թէ բացարձակ խայտառակութեանց վարժ կառավարութեան մը սպասել որ իր խօսքը յարգէ, չափազանց պարզամտութեան միայն կրնայ առաջ գալ, բայց Հիւպատոսները ոչ միայն իրենք զիրենք երաշխաւոր կը ցուցնէին, այլ կը յաւելուին թէ խանութներուն գոց մնալը տեղի կուտայ կոտորածի: Նոյն օրը վաշտ մը զօրք քաղաքէն դուրս կելլէր փախչող հայերու արգելք լինելու համար. բայց Հիւպատոսները խալիլէն խաբուելով կը հաւաստէին թէ զգուշութեան համար է որպէս զի թիւրք և քիւրդ խուժանը չի յարձակի քաղաքին վրայ:

Արեքշաբթի առաւօտ Առաջնորդը եկեղեցիներու մէջ ծանուցումը ընել տուաւ թէ «ամէն մարդ կատարեալ վստահութեամբ թող իր գործը շարունակէ. հիւպատոսները ապահոված են քաղաքիս անվտանգութեան գերին, որ երկնային պատգամէ մը աւելի սրբութեամբ կը պահէ տէրութիւն մէկ խօսքը, կը թափէր շուկայ իր զբաղմունքը ձեռք առնելու: Զգուշացնող մը եթէ գտնուէր, եկեղեցւոյ ծանուցումը ի մէջ կը բերէին, իբր թէ եկեղեցւոյ մէջ սուտ երբեք չի լինիր. խեղճ ժողովուրդ և խեղճ դուրսիւ»:

Նոյն օրը քաղաքիս մօտ գտնուող թիւրք գիւղացիք խումբ խումբ քաղաք կը դիմէին իրենց եղած գրաւոր հրաւերին համաձայն որուն օրինակները տեսան յետոյ քաղաքիս հիւպատոսները. հեռաւորները արդէն օր առաջ եկած էին և ամենէն անշան թուրքի տուն 10-12 գիւղացի կը գտնուէր. այսպէսով բաց ի զինուորներէ որոնք մի քանի հազար էին 30-40-հազար պաշտպաններ, նոյն օր քաղաք համախմբուած էին:

(Կը շարունակվի.)

ԴԵՊԵ ԵԴԵՍԻՈՅ.

(Շարունակութիւն) 1)

Ոճրագործներու փափաքը լեցուած չէր տակաւին. հազարապետը ութը զօրքով է գաճի Մեղքոն էֆէն տիին աներծագը և երկու հայ հայոց թաղէն բերելով դէպի սէրայ կը տանէր: Հազիւ թէ հինգ վայրկեան անցած էր 4-5 հրացանի ճայթմունք լսեցինք. տակաւին մենք այդ սարսափի մէջն էինք, երբ լսեցինք փողոցէն անցնող մահմետականաց ձայներն ալ որ իրարու կը պօռային «ասկէրէր տէօրթ կեափուր էօրթուրթիւր»:

որովհետեւ յիշեալ Մեղքոն էֆէնտին երկու օր առաջ Պիրէճիքլիին մարմինը քննած և սիւն կիւլի վերջով մեռնին ատուեալ էր, այս պատճառաւ գացեր ըսեր էին թէ կուտակալը հիւանդ է, եկուր. ընկերներն ալ մի գուցէ երթայ փորձանքի մը հանդիպի, հետը կերթան. դժբաղդաբար անոնք ալ սպանուելով և ոտքերնին կապուելով կը քաշեն և Գարագոյին կոչուած գահափէժը կը ձգեն, որ 300 մէթրի չափ աղբանոցի փոս մ'է:

Ախոս, ասով ալ բարկութիւննին չիլաւ. կառավարութիւնը հաւաքեց բոլոր արիւնարբու աւագանները, քիւրտերը և ֆէյլահները. ամենուն ալ ուղած զէնքը յանձնեց, որը բաժն, որը սուր, ուսնց ալ հրացան և խրկեց համախմբեալ հայոց թաղը, որոնք երկուշաբթիէ իվեր կը պօռային թէ՛ մենք տէրութեանը (սուլթանի) միշտ հնազանդ ենք և միշտ հարկերնիս կը վճարենք: Հնազանդութեան դէմ հայհոյանքներով և սարսափելի արշաւանքներով և զօրքին հետեւելով հայոց թաղը գացին: Երեքշաբթի ցորեկ ժամը 10-էն մինչև գիշերը ժամը 5 անհամար էին հրացանից որոտման ձայները. ի զուր աշխատեցան, հայոց թաղը չը կրցան մտնել, և տեսան որ եթէ մտնելու ըլլան անպատճառ կոտորած պիտի ուտեն, ետ դարձան: Այդչափ հրազինուց գործածութեան բաղդատմամբ երկուստեք մնասը շատ թեթեւ էր, հայոց տուններէն յիսունի չափ աւար և 50-ի չափ մեռեալ կար, իսկ իրենցմէ, թուրքերէն, 5 մեռեալ:

Այժմ լաւ հասկցան թէ քանի որ քրիստոնէից քովը զէնք կը գտնուի, անկարելի է իրենց փափաքին հասնիլ, անմիջապէս զօրքերը հայոց թաղին չորս կողմը պատեցին և արգիլեցին բոլոր թաղը սեւ ու տեստ մտնել, նոյն իսկ յարգը և գարին: Չը մտնամ նաև յիշել թէ խեղճ պանդուխտ սասունցիները որոնք հացագործի փուռերու մէջ և քաղաքին մօտ ջաղանցքները կը գործէին, բոլորը սպանուեցան հայ ըլլալուն պատճառաւ, նաև քաղաքէն 3-4 ժամ հեռու այգիները այգեկութի գնացող հարիւրէն աւելի հայերը ջարդեցին, իսկ օրիորդները յափշտակեցին և մնացեալ կիները մերկ զօրքերուն ամառանոցը բերին. 4-5, օր վերջը տուններնին զրկեցին ամեն գէշութիւն և պղծութիւն ընելէ վերջ, որովհետեւ իրենց օրէնքը այնպէս կը տրամադրէ, և եթէ մէկը սպաննես Աստուծոյ ուղի բարիք ըրած կըլլաս. հայուն հոգին, ստակը և պատիւը իրենց է. շատերուն բերնէն կը լըսուէր թէ «շու կեաւուրլարի պիթիթիթիթիթիթի ճէնէթ եկելու կէօրմէյիլ. օլուրբի, պու էրմէնի կեափուրլար քեաֆիր մօքթֆ վէ ինկիլիլ կիպի պիզէ պիր մուսալէթ օլուրլար»:

Մահապիկ չորեքշաբթի. սկսան հայոց հարուստները, քաջերը և նշանաւոր անձերը հաւաքել ու բանտարկել և ըսին թէ ձեր մէջ ընկերութիւններ և գաղանիքներ կան, զօրքի 1,800 մար թիւն ունէք. պատասխանեցին թէ՛ չունինք. վերջապէս Հասան ֆաշան և Մուրթապարֆն սկսան բանտարկեալներէն ստակ պահանջել, ըսելով թէ եթէ չըտաք, ձեզ կախաղան պիտի հանենք. խեղճերը ունեցածնին տալէ յետոյ հազարաւոր լիւաներ ալ փոխ առնելով վճարեցին և ցարդ բանտն են: Նաև քահանաները կանչելով ըսին թէ՛ ձեր ունեցած մար թիւն ինչ երբ բերէք որ արգելքը վերցնենք և թող տանք հայոց որ շուկան իջնեն. անոնք ևս պատասխանեցին թէ չունինք, յորմէ յետոյ թնդանօթը 100 գնդակով հանելով հա-

յոց թաղին վերի կողմը շարեցին և բսին մար թիւնի-
ն երը եթէ չը տաք բոլոր հայերը թնդանթով պիտի
զարնենք, ոչնչացնենք: Նորէն պատասխանեցին թէ մենք
հասարակ զէնքէ զատ (հրացան, սուր, վեցհարուած-
եան) ուրիշ բան չունինք, ուղեցին թէ՛ բերէք ատոնք: Հա-
յերը բսին թէ կը վախնանք, որ մի գուցէ նորէն յար-
ձակումներ պատահին, գոնէ մենք զմեզ կը պաշտպանենք:
Մ ու թ է ս ար ք ժ ր պատասխանեց. « եթէ ձեր ունեցած
զէնքերը ամբողջովին մեզ յանձնէք, կը խոստանամ
ձեզ պաշտպանել, աներկմիտ եղիք, ինչ որ ունիք հա-
ւաքեցէք մեզ բերէք: » Եւ զձ ժողովուրդը անմիտ ոչխա-
րի պէս գայլերէն խաբուեցաւ, և սկսան տունէ ի տուն
պտտելով զէնքերը հաւաքել ու կառավարութեանը
յանձնել. որչափ որ կը տանէին կրսէին դեռ կայ, բե-
րէք: Վերջապէս քահանաները աւետարանը ձեռքեր-
նին սկսան դնէ ի դուռ երթալ, տան տիրոջը կրսն
ինչոր զէնք ունիս բեր. խեղճը ամբողջ զէնքը յանձ-
նելէն վերջը ձեռքը աւետարանին վրայ դնելով երգում
պիտի ընէր թէ քովս ոչ թէ հրազէն, միս կտրելու
դանակ մը, զմեզ մը իսկ չը մնաց: Այս կերպով բոլոր
հայոց զէնքերը հաւաքեցին առանց քովերնին զմեզ մը
թողելու: Յետոյ քահանաները և միւթ արն երը սէ-
րայը կանչուելով հայոց քով զէնք չը մնալուն հա-
մար երգում տուն:

Նոյեմբեր 21-ի գիշերը 20-էն աւելի մար թի-
նի-ի ճայթմունք լսեցինք, մեծ սարսափ ազդեց այս
չարագործութիւնը բոլոր հայոց վրայ, ահա ներս մը-
տաւ այնթապի լէմին անուն մահատականը որ պա-
հեստի զօրաց հարկւրապետին բարեկամն էր, պատմեց
եղելութիւնը, որուն ցերեկունէ հարկւրապետը յայտ-
նած էր թէ քէթանձի թորոս ազան իւր գերդաստան-
եօք պիտի ոչնչացնեն եղեր, յիշեալը 2,000 լիրա տա-
լով հարկւրապետին և բանտարկուելով կեանքը ա-
զատեր է: (Կը շարունակվի)

Հ Ա Յ Ո Յ Կ Ե Ա Ն Ք Ի Յ

ՊԱՏՐԻԱՐԹԻՆ ՇՈՒՐՁԸ. — ՎԵՐՁԻ
ԲԱՐԻՆ.

«Միշտ նոյն բանը կ'ըսեմ վասնզի միշտ նոյն բա-
նըն է, և եթէ միշտ նոյն բանը չըլլար, միշտ նոյն բա-
նը չէի ըսեր». Բիւրրոյի այս արդարացումը փոխ առ-
նելու պէտքը կ'զգարք երբ «Հայոց կեանքից» բաժ-
նին մեջ նորէն Իզմիրեան Պատրիարքին հրաժարականը
մեզի կ'զբաղեցնէ:

Պաշտաւորապէս այդ հրաժարականին շուրջը կը
դառնան վերջին շաբթուան մեջ Պոլսէն անգլիական
թերթերուն զարնուած հեռագիրները: Պայրամէն ետ-
քը Երևոյի պալատը գումարուած նախարարական ժո-
ղովն մը խորհրդակցութիւնները երկու «մեծ հարցի»
մասին կատարուել են՝ եգիպտական խնդիրը, հայերու...
պատրիարքին խնդիրը: Եգիպտոսի գործերը երբ մէկէն
ի մէկ նոր կերպարանք մը առնելով կ'սպառնան ահեղ
հարուած մը տալ նաեւ սուլթանին Եգիպտոսի վրայ ու-
նեցած գերիշխանական իրաւունքին, անշուշտ ուշագրաւ
երեւոյթ մըն է որ Թուրքիոյ համար կենսական կարեւո-
րութիւն ունեցող այդ խնդրին իբր հարազատը նը-
կատուի պատրիարքի անձնաւորութեանը խնդիրը որ սուլ-
թանին մտքին մեջ հայկական դատին հետ ի մի ձուլ-
ուած է: Ասկէ սուլթանին մտքին մեջ գամուած Իզմիրե-

եանը ո՛ր և է միջոցով հրաժարեցնելու սկեռեալ դա-
ղախորը:

Վ. Պոլսոյ քաղաքական և կրօնական ժողովները
միաբանութեամբ մերժած են Պատրիարքին ներկայա-
ցուցած հրաժարականը: Բայց հեռագիր մը կ'ըսէ որ
Խառն ժողովը այս խնդրին աւթիւ յայտարարեր է թէ
պատրիարքի մը հրաժարականը ընդունելու կամ մեր-
ժելու իրաւունքը միայն Ազգային ժողովին կը պատկա-
նի: «Արդ, կ'աւելցնէ հեռագիրը, որովհետեւ սուլթա-
նը երբեք պիտի չը թողարտէ Ազգային ժողովին գու-
մարումը, հետեւաբար պատրիարքական հրաժարականի
խնդիրը օրինաւորապէս չը կրնար լուծուիլ:»

Այս վերջին ենթագրութեան մեջ սխալում կա-
րելի չէ: Սուլթանը 1891-էն ի վեր ալ չէր ուզած
արտօնել Ազգային ժողովին գումարումը և սակայն 94
ին վերջերը պարտաւորուեցաւ պարագաներուն առջեւ
տեղի տալ. ինչ որ Համիտ ան տտեն ահամայ ըրաւ
արդեօք այս անգամ սիրայօժար պիտի չը կրկնէ՞ նոյն
արտօնութիւնը, անշուշտ «բացառաբար», եթէ ապա-
հով ըլլայ որ Ազգային ժողովը իր կամքը գործադրե-
լու պիտի կոչուի: Ուրեմն խնդիրը այն է թէ Ազգային
ժողովը սուլթանին համար վստահելի մարմին մը կըր-
նայ նկատուիլ թէ ոչ:

Այս հարցումին վերջնական որոշ պատասխան մը
չենք կրնար տալ: Ազգային ժողովը «վերանորոգուե-
ցաւ» 1891-ին երբ Աշգեան վերագրանալով պատ-
րիարքարան հարկ տեսաւ «մաքրել» այդ մարմինը այն
տարերքներէն որոնք ծանր արգելքներ կրնային յա-
րուցանել էֆէնտիական քաղաքականութեան առջեւ: Ա-
շգեան պաշտօնական ճնշումով յաջողեցաւ ներմուծել
Ազգային ժողովին մեջ խումբ մը երեսփոխաններ որոնք
միանալով իրենց արժանաւոր նախորդներուն Թուրքիոյ
հայերուն ղեկավարներ նշանակեցին Նուրեանն ու Մաք-
սուտը: Իրաւ է թէ այդ ժողովն էր որ 1894-ին Իզ-
միրեանը պատրիարք ընտրեց, բայց յիշելու է նաեւ որ
Սասունի օրերն էին, երբ մեծ պետութիւններու հո-
վանին կը տարածուէր հայերուն վրայ, սուլթանին լե-
զուն բռնուած էր, եւ հասարակաց կարծիքին ճնշումին
տակ Նուրեանները ժողովասրահէն աներեւութացեր էին
իբր հալածուած գեներ. իսկ հիմա կը կարծեն թէ շունչ
առնելու քանի մը ժամ ունին ուսկից օգտուելով կրու-
ուելու են օրհասական համբաւաւոր արջին նման, իրենց
զօրավիգ, փաշայութեան հեռապատկերը: Թուլամորթ
կամ դաւաճան խմբակ մը արդեօք կազմ և պատրաստ
չէ անարգ գործիք մը դառնալ Նուրեանի ափին մեջ
նման զառամած ողորմելի Աբրահամ փաշային որ ծե-
րութեանը օրերուն կ'սկսի ազգային կեանքը և պիտի
վերջացնէ զայն քարա — քեհեա մականունին վրայ ի-
րաւցնէ սե քօղ մը ձգելով: «Թայմզ» ին կը հեռագրե-
րուի թէ սուլթանը 10,000 ոսկի խոստացեր է այդ
«մետասաներորդ ժամու» դաւաճանին եթէ յաջողի
օձի գերը կատարելով խաբել Իզմիրեանը և խլել ա-
նոր հրաժարականը: Ոսկի անձրեւ թող սկսի անգամ մը
տեղալ. ո՛՛՛՛ ինչ ճարպիկութեամբ Նուրեանները պիտի
գիտնան թէ իրենց և թէ զրոյցիներուն արտերը ո-
ւոգել ու բեղմնաւորել:

Ազգային ժողովը իր արդի կազմակերպութեանը
մեջ կրնայ կատարեալ օրինաւորութեամբ այդ անունը
կրել: Հաշմանդամ մարմին մըն է, զրկուած ըլլալով 140
երեսփոխանի իր օրինաւոր թիւէն, որուն գրեթէ 50-ը
պակսած է զանազան պատճառներով:

Եւ յետոյ. սահմանադրական տրամադրութեամբ Ազգային ժողովը բաժնուած է Հինգ խումբի, որոնց ամէն մէկը քուէով պաշտօնէն կը զադրի երկու տարին անգամ մը, և տեղը նոր ընտրութիւններ կը կատարուին: Այս դրութեամբ է որ ժողովը առանց երբեք լուծուելու իր գոյութենէն ի վեր, միշտ ամբողջապէս վերանորոգուած է տասը տարուան շրջանակներու մէջ: Օրինական այս տրամադրութիւնը սակայն անգործարելի մնացած է 1891-էն ի վեր, հետեւեալ հարկ է ժողովին գումարումէն առաջ կատարել երկու կամ երեք շրջանի նոր ընտրութիւնները:

Իբր սահմանադրական պաշտօնատար պատրիարքը չը կրնար անուշադիր թողուլ այս երկու պարագաները: Բայց պիտի առարկուի թէ ներկայ հանգամանքներուն մէջ անկարելի է օրինական տրամադրութիւններու գործադրութիւնը: Լաւ, բայց ան ատեն ժողով ալ պէտք չէ գումարել. ինչ հարկ, ինչ պէտք: Ո՛չ ազգը պատրիարքին հրաժարականը կը պահանջէ, ո՛չ ալ պատրիարքը այդ հրաժարականը տալու մէջ օգուտ մը կը նշմարէ:

* * *

Իզմիրլեանի հրաժարականի խնդրէն ետքը երբ կ'անցնինք ուրիշ նիւթի մը կը կարծենք թէ անյիշատակ ժամանակներէ ի վեր առաջին անգամը պիտի ըլլայ որ Բիւրորդի համբաււոր արգարացումը կրկնելու հարկ պիտի չը տեսնուի: Այդ անյիշատակ ժամանակներէ ի վեր ոչ միայն վասպուրական այլ ամբողջ հայ ազգը զբաղեցաւ վանի Պողոս եպիսկոպոսով, ու միշտ «նոյն բանը» ըսաւ, վասնզի «միշտ նոյն բանն էր», այսինքն ազգադաւ չարագործ մը որուն հետ զուլս ելել կարելի չէր: «Հնչակ»-ին վերապահուած էր «նոր բան մը» ըսել, կամ աւելի ճիշդը «նոր բան մը» ընել այդ բրածոյի մասին. և մէկ անգամէն վերջացաւ խնդիր մը որ չենք գիտեր դեռ քանի սերունդի պիտի փոխանցուէր: Անկիկքն էր վանի Պողոս եպիսկոպոսը ուստի և կրնար անվախճան ալ համարուիլ. չարագանցութիւն չէ ըսածնիս. հիմակուան ոչ թէ երիտասարդները այլ և տարիքոտները անգամ չեն կրնար յիշել թէ երբ սկսած է Պողոս եպիսկոպոսի խնդիրը. որ հայը որ աչքը բացած է լսած է ադ անունը և անոր «փառքը» յօրինող գործերը:

Թերեւս մենք զեռ չէինք ծնած երբ ազգը տակն ու վրայ կ'ըլլար Պողոս եպիսկոպոսով: Ան ատեն դեռ գաղտնի գիտը չէր եղած, և սրամտութիւնն էր միայն որ սուրի տեղ կը ծառայէր. ան ալ զէնք մըն է որուն հետքերը սակայն միայն յիշատակներու մէջ կըրնան քիչ մը պահուիլ: Ժամանակին երգիծաբանական հանգէսը «Մեղու» օր մը ելաւ ինքնաբերաբար կարգադրել ըրաւ Պողոս եպիսկոպոսը, ու «սրբազան Պողոսը վերածեց» պարոն Պողոսի: Ահա պատրիարքարանը վեր ի վար կ'ըլլայ, ատեն կը հրաւիրեն երգիծաբան հրապարակագիրը և հաշիւ կը պահանջեն գործած «սրբապղծութեանը» համար: Այո Պողոսը չարագործ մըն է, բայց «սրբազան» չարագործ մը. իր գործած ոճիրները բաւական չեն զինքը «պարոնութեան» ստորն աշն ելու:

—Ահ, կը պատասխանէ հրապարակագիրը, ժողովըդին վիայութեամբն էր որ այդ մարդը եպիսկոպոսութեան բարձրացաւ, այդ ժողովըդին միաձայն վեհալութեամբն է որ ես զինքը պաշտօնավորել կ'ընեմ:

Յետոյ, տարիներ ետքը, այդ ժողովուրդը միաձայն հաւանութեամբ «Մեղու»-էն աւելի անդին անցաւ, և

«սրբազան Պողոսը» ըրաւ «Հէյն Պողոս»: Ժողովուրդէն նուիրուած այդ չորս տառին մէջ կը պարունակուի Պողոսին ամբողջ էութիւնը:

Այդ ապիրատին համար կարծես ստեղծուած էր «յաւիտենական երիտասարդութեան» բացատրութիւնը: Դեռ վերջերս պատրիարքարանը հրահանգ զրկեց «Հէյն»-ին հանգարտ տեղը նստիլ կամ վանքը քաշուիլ, ու այս ճգնաժամին նորանոր աղէտներու պատճառ չըլլաւ: Պողոս կէս մը անսաց պատրիարքարանին հրամաններուն նկատելով որ քաղաքական դործերուն դարձուածքը շատ նպաստաւոր չէին դաւաճանութեան: Բայց վերջերս յոյս առած էր. ազգին արինովը զօրանալու հնարաւորութիւնը կը տեսնէր. իր առաջնորդական ապօրէն ընտրութիւնը, զոր խրկած էր պատրիարքարանը, կը ջանար օրինաւոր հաշակել տալ տեղական իշխանութիւններու ձեռքով: Վասպուրականը ահագին թշուառութիւններու պիտի մասնուէր: Ով գիտէ ինչքան վտանգներ կը պատրաստուէին այդ դժբաղդ երկրին երբ Հնչակեան կուսակցութեան վանի Մաննաճիւղը խնդիրը կարճաւոտ կերպով լուծեց:

«Վերջը բարին ըլլայ» կ'ըսէ ժողովուրդը, ու այդ «բարին» շատ անգամ «չարիքին» ծնունդն է: Ահա չէյն Պողոսին մահուան բարոյականը:

~*~

ԲՕԼԳԱՐԻԱ — ՍԻԼԻԱՍՏՐԷ քաղաքի Հնչակեան Մասնաճիւղի միջոցով 30 զառիսական լիրա:
ԱՄԵՐԻԿԱ. — Ն Է 2 Ուա քաղաքի Մասնաճիւղից 53 դոլար:

ՎՈՒՍԱԿԵՆՈՒԹԵԱՆՍ ԳԱՆՃԱՐԱՆՈՒՄ ՀՆՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՄԸ ստացվել են հետևեալ գումարները. —

ԹԻԻԲԵԻԱ. — Բագոս քաղաքից ազատաւերներից 26 մեջիդ: Զ. քաղաքից Պ. Վ. 20 Փրանկ: ՊՖ. քաղաքից 10 օսմ. լիրա: Պ. քաղաքից 1 չիլինգ 8 պենս:

ՌՈՒՄԵՆԻԱ. — Բակավո քաղաքի Հնչակեան Մասնաճիւղից 100 Փրանկ: Քօբշան քաղաքի հայ պանդուխտներից 75 Փր.: Օստրով Բ. Բ. -ից 5 Փր.:

ԲՕԼԳԱՐԻԱ. — Բատումիր քաղաքից Տ. Մ. Վ. 40 Փրանկ: Սլիվկեն քաղաքից 40 Փր.: Բ. քաղաքի Մասնաճիւղից 103 Փր. դարձեալ նոյն Մասնաճիւղից 60 Փր.: Լոմ-Պալանկա քաղաքի Հնչակեան խմբից 85 լեվա:

ԱՄԵՐԻԿԱ. — Հէվերհիլ քաղաքի Հնչակեան Մասնաճիւղից Պ. Կ. և Քիւրտ 10-ական դոլար, Մ. Ս. 7 դ. Ա. Կ., Ա. Ե., Արիւն, Խ. Տ., Պկմըն և Խայթ 5-ական դ. Պ. Վ. Պ. և Տ. Ս. Շ. 2-ական դ. Մ. Մ. 1 դ. Ոմն 50 սենտ:

ԱՆԳԼԻԱ. — Մանչեստր քաղաքից, Սալթայէլից 5 անգլիական լիրա:

ՖԻՆԼԱՆԴԻԱ. — Բօշէն քաղաքից Հ. Յ. Ս. 2 Փրկ.:

ԲԵԼԳԻԱ. — Անվէրս քաղաքից Ա. Մ. -ից 10 Փր.:

ԵԳԻՊՏՈՍ. — Պայիւրէի Մասնաճիւղից 3 անգլ. լիրա և 16 չիլինգ:

ՌՈՒՍԼԱՆԴԱ. — Ան. Ա. -ի միջոցով, Խ. Բ. քաղաքից 410 ռուբլի:

ԱՒՍՏՐԻԱ. Վիեննա պարտաճանաչ և անձնուէր 300 Փիորին: Եշտ, Տիկին Խոնա Բաթրոչպանի, Ղուկաս Բաթրոչպանի և Մոնլար Անթոյ երեսփոխան: 5-ական Փր.:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և գրամ ու մանդատ ուղարկել հետևեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London W. [Angleterre].